

16. Feast of the Assumption of the Holy Mother of God

Song of Songs 4:9-15; 8:14; Isaiah 7:10-16; Galatians 3:29-4:7; Luke 2:1-7

Lections for Blessing of Grapes: Proverbs 3:9-10; Isaiah 65:8-10; Hebrews 6:16-7:7; John 15:1-8

16. ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ

Երգ Երգոց 4:9-15; 8:14; **Եսայի 7:10-16; Գաղատացիներուն 3:29-4:7; Ղուկաս 2:1-7**

Ընթերցումներ Խաղողօրհներ՝: Առակաց 3:9-10; **Եսայի 65:8-10; Եբրայեցիներուն 6:16-7:7;**

Յովհաննէս 15:1-8

Եսայի 7:10-16

Դարձեալ, Տէրը այս պատգամը դրկեց Աքագի, ըսելով. «Տէր Աստուծմէղ քեզի համար նշան մը խնդրէ, երկրի խորերէն կամ երկինքի բարձունքէն»: Աքագ պատասխանեց. «Ո՛չ, զԱստուած չեմ փորձեր»:

Այն ատեն Եսայի ըսաւ.

«Լսեցէ՛ք ուրեմն, ո՛վ Դաւիթի տուն. չի՞ բաւեր որքան մարդոց համբերութիւնը հատցուցիք, որ կը փորձէք Աստուծոյ համբերութիւնը եւս հատցնել:

Ճիշդ այդ պատճառով Տէրը ի՛նք հետեւեալ նշանը պիտի տայ ձեզի.- Կոյսը պիտի յղանայ եւ զաւակ մը ծնի, որ Էմմանուէլ պիտի կոչէ:

Անիկա կարագով ու մեղրով պիտի սնանի, եւ նախքան չարը ճանչնալը եւ կամենալը՝ բարին պիտի ընտրէ. եւ տակաւին անիկա բարին ընտրել ու չարը մերժել չտրված՝ երկու երկիրներն ալ, որոնցմէ դուն կը վախնաս, իրենց թագաւորները պիտի կորսնցնեն եւ քու երկիրդ պիտի փրկուի»:

Գաղատացիներուն 3:29-4:7

Արդ ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանիք, կը նշանակէ թէ դուք Աբրահամի զաւակներ էք եւ պիտի ժառանգէք ինչ որ Աստուած անոր խոստացաւ:

Բայց գիտցէ՛ք նաեւ, թէ ժառանգորդ մը թէպէտ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի խնամակալներու եւ հոգաբարձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակակէտը: Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ դրկեց իր Որդին, որ կնոջմէ մը ծնաւ եւ Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ դրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Աբբա», այսինքն

«Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ՝ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

Ղուկաս 2:1-7

Այդ օրերուն, Օգոստոս կայսր հրամանագիր հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիայի կառավարիչ Կիրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայր քաղաքը կ'երթար՝ իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ, Դաւիթի ցեղէն եւ ազգատոհմէն ըլլալուն համար, Գալիլեայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը, Դաւիթ թագաւորին ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթլեհէմի մէջ Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

Եսայի 65:8-10

Տէրը այսպէս կ'ըսէ.-

«Այնպէս ինչպէս երբ ողկոյզին վրայ խաղողի ճիւղ մը մնացած ըլլայ՝ կ'ըսեն. «Մի՛ նետեր ողկոյզը, որովհետեւ անոր վրայ Տիրոջ օրհնութիւնը կայ», այնպէս ալ ես իմ ծառայիս սիրոյն պիտի խնայեմ եւ կորուստի պիտի չմատնեմ բոլորը:

Յակոբի որդի Յուդայէն սերունդ մը պիտի հանեմ որ իմ սուրբ լեռս պիտի ժառանգէ. իմ ընտրեալներս զայն պիտի ժառանգեն եւ իմ ծառաներս այնտեղ պիտի բնակին:

Զիս փնտռող ժողովուրդիս համար Սարոնը հօտերու արօտավայր պիտի ըլլայ եւ Աքորի ձորը՝ նախիրներու հանգստավայր:

Եփրայեցիներուն 6:16-7:7

Մարդիկ իրենցմէ վեր բաներու վրայ երդում կ'ընեն, եւ երդումը կը գործածեն իբրեւ ապահովութիւն տալու կերպ՝ իրենց վէճերուն վերջ դնելու համար: Աստոր համար, Աստուած ինք ալ երդումը օգտագործեց՝ իր խոստումին ժառանգորդներուն յստակօրէն ցոյց տալու համար իր որոշումին անփոփոխելի ըլլալը: Աստուած այս երկու բաները՝ խոստումն ու երդումը, որոնք անփոփոխելի են եւ որոնց կապակցութեամբ անկարելի է որ ստէ, տուաւ՝ որպէսզի մենք որ իրեն ապաւինեցանք, մեծապէս քաջալերուինք եւ մեզի տրուած յոյսին կառչինք: Այդ յոյսը մեր խարիսխն է, ապահով եւ անշարժ, որ կը մտնէ երկնաւոր տաճարի

վարագոյրէն ներս, ներքին Սրբարանը, ուր Յիսուս մտաւ մեզմէ առաջ եւ մեզի համար, եւ յաւիտենական Քահանայապետ եղաւ, Մելքիսեդեկին պէս:

Այս *«Մելքիսեդեկը Սաղէմի թագաւորն էր եւ բարձրեալ Աստուծոյ քահանան, որ Աբրահամը դիմաւորելու ելաւ, երբ անիկա պատերազմէն կը վերադառնար, թագաւորները պարտութեան մատնելէ ետք. եւ Մելքիսեդեկ օրհնեց Աբ-րահամը: Իսկ Աբրահամ իր ամբողջ աւարին մէկ տասներորդը անոր տուաւ»*: Նախ, Մելքիսեդեկ անունը կը նշանակէ՝ արդարութեան թագաւոր: Երկրորդ, Թագաւոր Սաղէմի՝ կը նշանակէ թագաւոր խաղաղութեան: Մելքիսեդեկի ո՛չ հայրը յայտնի է, ո՛չ մայրը եւ ո՛չ ալ ծագումը. իր կեանքին ո՛չ սկիզբը գիտենք եւ ո՛չ ալ վախճանը: Նման է Աստուծոյ Որդիին. մշտնջենական քահանայ է:

Արդ, տեսէք թէ ինչպիսի՛ մեծ մէկն էր Մելքիսեդեկը, որուն Աբրահամ նահապետ պատերազմական աւարէն տասանորդ տուաւ: Գիտենք, թէ Ղեւիի որդիներէն անոնք որ քահանայական պաշտօնը կ'առնեն, հրահանգ ունին Օրէնքին համաձայն տասանորդ առնելու ժողովուրդէն, այսինքն իրենց ազգակիցներէն, թէպէտեւ ասոնք ալ Աբրահամի զաւակներն են: Մելքիսեդեկ Ղեւիի սերունդէն չըլլալով հանդերձ՝ տասանորդ առաւ եւ օրհնեց Աբրահամը, որ Աստուծմէ խոստումները ստացած էր: Եւ կասկած չկայ որ օրհնողը շատ աւելի բարձր է քան օրհնուողը:

Յովհաննէս 15:1-8

Ես եմ ճշմարիտ որթատունկը, եւ Հայրս մշակն է: Անիկա կը կտրէ վրաս հաստատուած բոլոր այն ճիւղերը որոնք պտուղ չեն տար, իսկ բոլոր անոնք որոնք պտուղ կու տան՝ յօտելով կը մաքրէ, որպէսզի աւելի պտղաբեր ըլլան: Դուք արդէն իսկ մաքրուած էք այն խօսքին համար՝ որ ձեզի խօսեցայ: Ինծի միացած մնացէք եւ ես ձեզի միացած պիտի մնամ: Ինչպէս որ ճիւղը ինք առանձինը պտուղ չի տար՝ եթէ որթատունկին միացած չըլլայ, նոյնպէս ալ դուք չէք կրնար պտուղ տալ՝ եթէ ինծի միացած չըլլաք:

Ես եմ որթատունկը եւ դուք՝ ճիւղերը: Ով որ ինծի միացած է եւ ես անոր՝ անիկա առատ պտուղ պիտի տայ, որովհետեւ առանց ինծի դուք ոչինչ կրնաք ընել: Ով որ ինծի միացած չի մնար՝ կտրուելով դուրս կը նետուի եւ կը չորնայ, նման այն ճիւղերուն՝ որ կը հաւաքեն եւ կրակը նետելով կ'այրեն: Եթէ ինծի միացած մնաք եւ խօսքերս ձեր մէջ մնան, խնդրեցէք Աստուծմէ ինչ որ ուզեք, եւ պիտի տայ ձեզի: Իմ Հայրս կը փառաւորուի, երբ դուք առատ պտուղ տաք եւ այսպիսով իմ աշակերտներս ըլլաք: